

ՏԱՄՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և սուրբ օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Նամակ Զանգեզուրից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաղապար Զրաքարայում. Նամակ Եւֆրատից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ենթերին.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ

Օգոստոսի 28-ին

Զանգեզուրի գաւառը լաւ մաքրվել էր աւազակներից և այդ մասին ժողովրդի ուրախութեանը չափ ու սահման չը կար: Բայց նորերումս ժողովուրդը դարձեալ տագնապի ենթարկվեց: Շատերից միայն ինձ յատնի երկու դէպք պատմեմ: Նախ չուանիձորեցի Թամարզ Զամբարձումի տունը կտրել է թղտուցի խմայիլ անուշով յայտնի աւազակը, հետը տանելով տասն և մի հազար ռուբլի փող: Յիշեալ աւազակը և նորանից առաջ էլ նրա նմանները շատ անգամ պատապարհ են գտել Բուդաբար ասվող թաղաքի մի գիւղում, և ապա Ալանգաղով անցել դէպի Պարսկաստան, դէպի Զանգեզուր, կամ դէպի Օրդուբաձ: Բուդաբարում, որ առանց իշխանութեան իրաւունքի մի գիւղ է և մի ամենախուլ անկիւն է, հաւաքվել են մերձակայ գիւղերից մօտաւորապէս տասն տուն: Դրանք են, որ տեղ են տալիս ու կերակրում, ճանապարհ են դնում փախապառններին, աւազակներին: Եթէ Բուդաբարում այժմ բնակիւթոյններն ցրվեն իրանց բնակավայրերը, պէտք է հաստատուեան ընկնէ, որ զոյնաման չարիքները կը պակասեն: Երկրորդ՝ Սիւխանում ուժ, սմանք պատմում են քսանութնից կամ աւելի հոգի թուրքերից բաղկա-

ցած, զինված պատրոններով և բերդանկա կամ Հենրի-Մարտինի հրացաններով, մի աւազակախումբ է երևացել օրերումս: Իրանք օր ցերեկով նոյն իսկ գիւղում պահապաններ դրված ժամանակ, մտնում են հայաքանակ գիւղերը, կանչում են իրանց մօտ գիւղի տանուտէրին, քահանային կամ աղախակներին և ստիպում նրանց վճարել իրանց հարկի վերջին կիսամեակը: Բացի դրանից յականե-յանտանէ հարուստներին կանչում են և պահանջում նրանց կարողութեան համեմատ վարձատրութիւն: Հարց է թէ այդ մարդկանց անունները որտեղից սովորեցին: Ստանալով այդ փողերը՝ տալիս են ստացադիր և պատկրում: ցոյց տալ այդպիսին դաւաճապետին: Մի թեթև ընդդիմութիւն կամ կամակորութիւն պատժվում է մահաւորութեամբ: Դրանց անարգել գործունեութիւնը այն տեղն է հասել, որ հարսին սկիսքայրի մօտ առևանգել ու բռնաբարել են, բայց ձայն-ձայտուն հանող չէ եղել: Ճանապարհորդութիւնը դէպի Նախիջևան, մի քանի անգամ արգելքների հանդիպելով, ընդհատվել է: Իրանց գոյութիւնից ձեռք վերանշած այդ փախապառնները ամեն ինչ արել են: Գաւառապետ պ. Սուշիակին կազմ դնաց աւազակներին ձերբակալելու, բայց նրա արշաւանքն շատ անաջող անցնելով, երէկ վերադարձաւ Գորիս:

Այժմ նա մեծ եռանդով աշխատում է բնաջինջ անել այդ աւազակների խմբերը:

Մ. Ե.

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 6 սեպտեմբերի

Խնդրեմ մի անկիւն շնորհէք ձեր պատեական լրագրի մէջ այս մի քանի տողերիս, որոնց առիթ է տուել իմ ատացած մի մանաւոր նամակը: Մի պարոն ինձ գրում է. «Ես լսել եմ որ դուք բռնակալում էք սօլիտերով հիւանդներին, բայց որքան

լրագրիները թերթում եմ, ոչ մի տեղ ձեր յայտարարութիւնը չեմ տեսնում»:

Հարկաւոր եմ համարում ասել, որ 1880 թ-ից սկսած մինչ օրս շատ անգամ պատեական «Մշակ» լրագրի մէջ գրվել է իմ դեղի մասին, ապա ռուսաց «Кавказ» լրագրում և վրաց լրագրիներում քանի անգամ գրվել է նոյն դեղի մասին, մինչև անգամ 1883 թ-ին «Кавказ» լրագրում իմ գործածած դեղա բանակուրի նիւթ էլ դարձաւ: Ես ոչ մի տեղ բժշկական մասնագիտութիւն չեմ սովորել սօլիտերից բժշկելու համար, այլ ինձ վրա փորձելով եմ ձեռք բերել դեղը: Օգուտ քաղելով դեղի յատկութիւնից, որը մի անգամ ընդունված լինելով հիւանդից՝ բոլորովին արմատախիլ է անում սօլիտերին, ես մինչև այսօր թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում կարողաւայ աւելի քան 1200 հոգի ազատել սօլիտերից: Ես իմ պատրաստած շուտ ներգործող, բայց կատարելապէս անմիջապէս դեղով:

Մարտիրոս Հախնազարեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են հետեւեալը. «Սեպտեմբերի 1-ին ժամը 12-ին պարսից Շահը, իր սկիւտայով մը տաւ Հին-Նախիջևան, հանգստացաւ գաւառապետի տանը, ապա շրջեց մի շարք գիւղերից: Դիմաց, նրանից մի քանիսն էին խօսելով: Ժողովուրդը մեծ համակրութեամբ էր ընդունում Շահին. քաղաքային այցին, տների տանիքները և փողոցները լի էին խուռն բաղմունքով: Մի ժամ ու կէսից յետոյ խուռնեան նահանգապետի, ժանդարմների գնդապետի, զինկապ Պապովի և ուրիշների ուղեկցութեամբ, Շահը ձայնապարհ ընկաւ դէպի Զուլփ, որտեղ սպասում էին նրան կողակների մի խումբ և պարսից զորքը սահմանի վրա»:

Այդ միջոցին եկեղեցին մտաւ մի միջահասակ քառասունամեայ մարդ, դուռնաթափ դէմքով և կոր քամակով... Դռնեցաւ սեղանին, աղոթեց մի քանի րոպէ արտասուելով և ապա դուռնաթափ քահանաներից տէր-Մարտիրոսին, ասեց զոգոջուն ձայնով.

—Տէր-հայր, կարող ես ինձ խոստովանեցնել...  
—Ինչու չէ: Խաչատուր աղա, ժպտաց քահանան—բայց պատմատե հա:  
—Այո, միմիջայ Խաչատուր աղան:  
—Սաղմոս կարդացել ես:  
—Ամբողջ գիշերը...  
—Շատ լաւ... հիմ, եթէ կուզես... և նա դէմքը ծածկեց—ինձ կը ներես, որ տուն երթամ և հաց ուտեմ դամ... չուտ կը գամ, դու աղօթիր...  
—Շատ լաւ, ասեց մեղմութեամբ Խաչատուր աղան և գնաց սեղանի առջև, չորեք այնտեղ և դուրսը ձեռքերի մէջ առաւ:

Տէր Մարտիրոսը շտապով մեկնեցաւ.  
—Ինչու չը շտապի, ասեց տէր-Պետրոսը ցած ձայնով միւսներին—այնպիսի ծուխ է, որ եթէ բոլորին ծախէ, սա միայն իրան կապրեցնէ: Եւ քահանաները ցրվեցին:  
Երբ գլուխը միշտ ձեռքերի մէջ առած, անշարժ, դուրսը խոնարհեցաւ, աղօթում էր և նրա թափած արցունքի կաթիլները մատների միջից զերկում էին սեղանի առջևի պաղ քարերի վրա...  
Ինչ ունէր խեղճ մարդը, որ աղօթելու և արտասուելու պէտք էր գգում և եկել չորեք Աստուծոյ առջև, կատարում էր իր խոստովանութիւնը... Ամբողջ կէս ժամ նա այդ դրութեան մէջ մնաց և միայն իր արտասուած թափախ երեսը այն ժամանակ բարձրացրեց, երբ քահանան հաց ուտելուց վերադառնալով, մօտեցել էր նրան և ասում էր.

Մեզ գրում են, որ ԱՍԽԱՅԻՍՏՈՒՄ այս տարի մրցերի առատութիւն է: Առատ է և հացարդար, ուստի կենսական միջոցները անհամեմատ էժան են, քան թէ անցեալ տարվայ այնպէս:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 2-ին երկաթուղու կայարանից ոչ այնքան հեռու մի տղայակում ոտակալները գտել են մի երկտասարդ մարդու դիակ, որը դաշոյնով մաս մաս էր կտրտված: Մի հացագործ ռուս երիտասարդ ամսիս 1-ին անյայտացած լինելով քաղաքից, նրա բարեկամները այդ կորած երիտասարդին են նմանեցնում գտնված դիակը, սակայն սպանվածի ու լինելը դեռ ևս հաստատ չայտնի է. քանի որ դիակին պակաս է զուլխը: Բացի մէջ էլ ձմեռվայ ամիսներում սպանութիւններ և գողութիւններ յաճախ են կրկնվում»:

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Նսում են, որ գաւառիս Սիսեան բաժնի գիւղերում, որոնց շրջակայքում կրկին երևացել են աւազակային խմբեր, տեղական վարչութիւնը թողատուր է գիւղացիներին զենքեր կրել, նոյն իսկ նոր ձեռք կատարելագործված զենքեր, որպէս զի գիւղացիները նախ ունենային իրանց անձը աւազակների դէմ պաշտպանելու: Այդ, ի հարկէ, շատ ուրախալի լուր է գիւղացիների համար»:

Բնական գիտութիւնների դասաւարտիւնի վերաբերմամբ լինել թէ չը լինելու հարց էր յառուցված այս օրերս Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան անդամների մէջ: Հոգաբարձութեան անդամների մէջ գտնվել են մարդիկ, որոնք ընկնում «հայկական կրթութեան ժամանակակից պահանջները» այն եղբայրացութեան են եկել, որ լաւ կը լինէր բնական գիտութիւնները դուրս զցել դպրոցի աւարականների միջից... Անկասկած այդ ան միտ միտ էր մի-

—Երբ, Խաչատուր աղա, գնանք խոստովանեցնեմ:

Եկեղեցու մի սիւնի տակ նստեց քահանան, Խաչատուրը չորեք նրա առջև, կարդաց «մեղան» և մի խոր հառաչանք արձակեց, երբ քահանան ասեց.

—Որդի, գործած մեղքերդ ասա...  
Խաչատուրը զոգոջուն ձայնով ասեց մի քանի մեղքեր և յանկարծ կանգ առաւ:  
—Էլ չը կայ... հարցեց քահանան:  
—Ոչ, ասեց Խաչատուրը հազիւ լսելի ձայնով:  
—Ուրեմն արձակում տամ, և նա ձեռքերը պարզեց...

Թանկարծ Խաչատուրը մի շարժում դործեց, ուղեց խօսելու—չը կարողացաւ, ուստի ուժգնութեամբ բռնեց քահանայի ձեռքերը:  
Քահանան ակամայ մի ճիշ արձակեց. Խաչատուրը մեռնալի պէս գոռաթափ, զոգոջուն էր և քիչ էր մնում ցած ընկնէր.

—Տէր հայր... գոչեց նա վերջապէս մի բուռն ճիգ գործելով:  
—Հիւանդ ես որդի...  
—Ոչ, ոչ, ընդհատեց Խաչատուրը—դեռ ես մի բան պիտի խոստովանվեմ քեզ, բայց տես, խոստացիր, որ ինչպէս վայել է քահանայի, խոստովանանքս քեզ մօտ դադարի պիտի մնայ մինչև յաւիտեան...  
—Այդ ի՞նչ խօսք է, որդի, ասեց քահանան—իզուր ես այդպիսի խօսքեր ասում. արդէն քահանայի պարտքն է ամեն խոստովանանք մինչև յաւիտեան դադարի պահել... մեր օրէնքի մէջ սաղ սաղ վառում են այն քահանային, որը խոստովանանքը դուրս է տալիս...  
—Աստուած կարգիդ միշտ հաստատ պահի, ասեց Խաչատուրը փոքր ինչ միամտեղով—այժմ լսիր... սրանից տես օր առաջ, մի գիշեր մեր տունը մտաւ մի երկիւղելի... կերակ, խմեց... բայց դրանով չը բաւականացաւ և ուղեց որ մեր Սեդ-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԵՆԻՉԵՐԻ

(Թիւրքահայերի կեանքից)

Դ.

Հազիւ թէ գալիս է աւագ հինգշաբթիին և հահ քահանաները այլ ևս հանգստութիւն չեն ունենում, որովհետև ամեն կողմից նրանց մօտ են թափվում խոստովանողները... Նրանք պէտք է իրենց հաղորդութիւն տան մանուկներին, յետոյ մէկ-մէկ խոստովանեցնեն իրանց մօտ եկող մարդկանց և որը տաժանելի է նրանց համար, միւս օրն էլ առաւօտեան շուտով պիտի շարունակ երկու օր խոստովանեցնեն կանանց և աղջիկներին, որոնք արդէն տեղ են գրաւել եկեղեցու մէջը և շուրջը, միմեանց հրմշկում են, իրանց խօսակցութիւններով ականջ են խլացնում և շատ անգամ այնպէս կռիւներ սարքում եկեղեցու մէջ, որ քահանաները թողնելով իրանց խոստովանանքը, ստիպվում են միջամտել, կոխորդ պատուելու չափ գոգգոռալ և կռիւր աշխատել հանդարտեցնելու:

Եթէ չը լինէին դատական երեք օրվայ առատ եկամուտները և ոչ մի քահանայ յանձն կառնէր այդ տաժանելի աշխատութիւնը, որը տարին երկու անգամ կրկնվում է Երզրումում:

Աւագ հինգշաբթի օրվայ առաւօտը, ժամերգութիւնը վերջացնելուց յետոյ, երբ քահանաները կամենում էին նախ տուն երթալ հաց ուտելու, որ յետոյ գան և սկսեն խոստովանութիւնները... փիղոնը ցած առնելու ժամանակ, աշակողմանի դատում լսվեց մի կուռի ձայն:

Կուռն էին երկու քահանաներ և իրանց կռիւն հետզհետէ հրաւրեց այդտեղ բոլոր միւս քահանաներին և կռիւր ընդհանուր դարձաւ:

—Ի հարկէ, գոչում էր տէր-Մեսրոպը տէր

Պետրոսին—հարուստ ծովաբեր բոլորը ընդն են, էլ ցաւ ինչ է... ասում ես քիչ ծուխ ունես հը, թէ քաջ ես, արի ծովաբեր փոփոխեմք, ես իմ ծովաբերից երեքը կը տամ, դու ընտրեցիք մէկը տուր...

—Ինչու չէ, ասեց տէր Պետրոսը ժպտելով—սիր ես կամենում:

—Այ, ես քեզ կը տամ Ծառուրենց, փրկանեց, Տէր-կարապետենց, դու ինձ տուր Տիարպէթիցենց...

—Ինչպէս չէ, ծիծաղեց քարձրածայն—ձեռքերդ բաց մէջը դնեմ... ծովաբերիցդ տասը տասն ես Տիարպէթիցենց չեմ տալ...

—Տեսնո՞ւ... լաւ ուրեմն Տէր-Աղաբենց տուր...  
—Ինչե՞ր ես խօսում, գոչեց տէր Պետրոսը—թէ խնկրացել ես, ասա, որ յիմար քահանան Տէր-Աղաբենց պէս ծուխ ունենայ և ձեռքիցը բաց թողնէ... այ, եթէ կուզես քո ծովաբերից հինգ ծուխ տուր, ես քեզ կը տամ Մարգարանեց...

—Հը, ծիծաղելով մէջ մտաւ այդ միջոցին տէր Մկրտիչը—լսել ես որ նրանց գործերը վատ են գնում նրա համար...

—Այն չէ, բայց, սա Հաջի կարապետենց լսել եմ, որ ծախում ես, քանի՞ կը տաս, ասեց տէր-Գրիգորը:

—Ծախում է, հա՛, ծախում ես, գոչեցին բոլորը—քանի, քանի:

—200 դուրու կանխիկ:

—Շատ թանգ է, գոչեց տէր-Մարտիրոսը—150-ի կը տամ...

—Ես 180 կը տամ, մէջ մտաւ տէր-Սեդրէա-սը...

—Ես 190... գոչեց տէր-Գրիգորը...

—200 ես տուր գնաց, ասեց տէր-Մկրտիչը և բռնելով տէր-Պետրոսի ձեռքը թողնեց.

—Փողը, հարցեց վերջինս:

—Հիմա տնից գալուն կը բերեմ...

այն մեծ և միտք կը մնայ, բայց հենց մի այդպիսի մտքի յղանակը ցոյց է տալիս, թէ ինչ խելքի տէր մարդիկ կան այն խմբի մէջ, որը կոչված է հայոց ամենամեծ դպրոցներից մէկը ղեկավարելու....

Պետական կալուածները մինչևս անհրաժեշտ խնդրագրեր է ստանում ամեն կողմերից՝ բանալու գիւղատնտեսական դպրոցները։ Մինչև այժմ միայն 25 գիւղատնտեսական դպրոցներ են բացված, և դեռ եւս նրանց մէջ ահագին պահանջ կայ։

Բոսանտանից եկող և զլխաւորապէս դէպի Կարսի կողմերը գնացող ռուս զաղթականներին վերջ չը կայ։ Այժմ թիֆլիսի փողոցներում ամեն քայլափոխում կարելի է պատահել այդ խղճուկ զաղթականներին. նիհար և տանջված հայրեր, ետեքի հիւսնոտ երեխան զրկած կինը, որի դէմքը կարծէք ասում է. «հէր ենք գնում», — և այդ երեքը միասին, սովորական խօսքը բերանին՝ «помогите переселенцам», — ասալով ամեն օր քաղաքի փողոցներով անց ու դարձ անողը.... Այդ թշուառ, խեղճ և յուսահատ զաղթականները այնքան շատ են գալիս և զընուտ, որ դրանց առջև կարծէք չըսես, որ թիֆլիսի բազմաթիւ աղքատները....

Մեզ տեղեկացնում են Կ. Պոլսից, որ խորմեան Հայրիկ մտադրութիւն ունէր այս աշնան կովկաս գալու, բայց մի քանի պատճառներով Հայրիկը անկարող եղաւ իրադրութեւ իր այդ մտադրութիւնը։

«Новое Время» լրագրում կարդում ենք. «Ֆինլանդական դպրոցներում մտցնում է ռուսաց լեզուի գործնական վարժութիւն, իբրեւ առանձին առարկայ»։

Կովկասեան ցուցահանդէսը պէտք է բացվի սեպտեմբերի 15-ին։ Ինչպէս լսում ենք, բացման ներկայ կարող են լինել միայն հրաւիրված անձինք։

Կ. Պոլսից մեզ գրում են, որ Արթին-փաշան հրաժարական տուեց սովթանին, բայց հրաժարակնք չէ ընդունել սովթանը։

Մեզ հաղորդում են, որ թիւրքաց Հայաստանի

րակի կինը իրեն յանձնենք...

—Վայ անօրէն, վայ, գոչեց քահանան սոսկում յայտնելով։

—Իմիր... սուրը ծաշեց, խելք կինը, Սեդրակին սենեակից դուրս չարտեց և առաւ կինը իր գիրկը.... մենք փախանք բոլորս.... բայց Սեդրակը, որը, ինչպէս գիտես, փոքր ինչ դիւրագրգիռ է, լսելով իր կնոջ ճիչերը... խելք տապալը և ներս վազեց.... Ախ, տէր հայր, մինչև որ ես հասայ.... Սեդրակը արդէն շարժել էր ենիչերի գլուխը....

Եւ լսելով գլուխը կուրծքին կախեց ու սկսեց արտասովել։

Քահանան պահ մը քարացած մնաց այդ սոսկալի խոստովանութեան վրա, բայց իսկոյն ամ փոփեց իրան և ասեց....

—Վատ բան... ուրեմն Սեդրակը այն օրվանից խենթացաւ....

—Ախ, այո, տէր հայր, ասեց խաչատուրը— խենթացաւ... կինն էլ այժմ մեռնելու մօտ հիւանդ է.... Աստուած մեզ այցելէ....

—Իսկ ենիչերի դիակը ինչ արիք, հարցրեց քահանան։

—Դիակը.... մեր բազմի մէջ թաղեցինք....

Տիրեց պահ մի լուռութիւն, որից յետոյ քահանան ասեց ծանրութեամբ.

—Թէն վատ բան է այդ, խաչատուր, բայց եղածը եղած է, լաւ արիւր որ եկար խոստովանեցաւ.... Աստուած գուցէ ձեր տան մեղքը ընշի.... ոչ օրի չը խօսէր, զգոյշ կացէք, ապա թէ հէ, տնով-տեղով կը կորսուիք.... Այժմ արձակում տամ քեզ.... դու ձեռքերդ արիւնի մէջ չես թաթխել, դու այդտեղ անմեղ ես....

Եւ քահանան մտադրաւ տուաւ արձակումը։

Ե.

Տէր-Մարտիրոսը խիստ մտադրաւ էր։

Ո՛վ գիտէ ինչէր էր մտածում նա. մինչև իսկ նրա պաշտօնակիցները նկատեցին, որ նա մի

նոստ գաւառի Գովանդուկի դիւղի վարդանան հարուստ եղբայրների վրա թափառական չէր քեզները յարձակում են և եղբայրներից մինին սպանում։ Միւս եղբայրը իր կողմից սպանում է չէրքէզներից մինին։ Չէրքէզները նախ տանում են իրանց մեռած ընկերի դիակը, և ապա հաւաքվում են աւելի սեծ թւով և սպանում են խմբովին յարձակվել Գովանդուկի դիւղի վրա։ Գիւղը սարսափի մէջ է։

Փանձակ գաւառի Չարդախլու գիւղից մեզ գրում են. «Վերջին ժամանակներս մեզ մօտ գողութիւնները շատացել են, մասնաւոր թուրք գիւղերում, օրինակ, յաճախ է պատահում այսպիսի գողութիւն. մէկին հարկաւոր է մի ջուխտ տրեխներ ճամբար կաշի, որ արժէ շատ-շատ 25 կօպէկ. նա, առանց երկար մտածելու, գողանում է հարսնանից նրա եղբ, կամ գոմէշը, որ արժէ գուցէ 50—60 ռ., մօրթում է 25 կօպէկ ստանալու համար.... Նորերումս մեզ մօտ նոր Քարամ է դուրս եկել,—մի ինչ որ փախտական Հուսէյն Գամուրչի-օղլի, որ փախել է մեզ մօտ Ղազարի գաւառից, տարաբաղաբար, տեղական ոստիկանութիւնը շատ դժուար է կարողանում բռնել այդպիսիներին, որովհետև կան մարդիկ, որոնք նրանց թաղցնելու չափ ունեն.... Այդ մեր բէգերն են։ Այդ բէգերը շատ վատ օրինակ են դառնում հասարակ դատի համար իրանց պախարակելի գոյներով... նրանց ոչ քաւն ուր, և ուրիշ փոքրաւորները լինում են ընդհանրապէս անսանձ գողեր, լաւ վարժված իրանց գործի մէջ. և շատ անգամ վայելում են իրանց աղայի հովանաւորութիւնը. փաստը ցոյց է տալիս, որ մեր գաւառամասում ամբողջ տարվա մէջ պատահած գողութիւնների հերոսները մեծ մասամբ բէգերի մարդիկն են, կամ նրանց բարեկամներն են։ Թողա՛ւրդի՛ն կեղծորդներ մի ուրիշ դաս, գիւղական իշխանները, և այդ բէգերը միմեանց շատ մօտիկ են և գործում են ձեռք ձեռքի սուռած. այժմեան պրիստաւը ջանք է գործ դնում այդ մարդկանց «ազդեցութեանը» վերջ տալ»։

Մեզ խնդրում են ապագրել հետեւեալը. «Աւելի քան հինգ շաբաթ է, ինչ նախկին Միքայիլի կտուրի գործարարը, որ անցել է վերջին տարիները մի ուրիշ հայ կապիտալիստի ձեռքը, թէ վերանորոգութեան, թէ մեքենաների փոփոխութեան պատճառով՝ չէ բանում։ Այդպիսի բանում են մի քանի հարիւր բանւորներ և յայտնի է, որ դրանք իրանց բազմաթիւ ընտանիքներով կազմում են

ըման օր էր, շարունակ աղօթքները սխալ էր կարդում, մէկը միւսի փոխարէն... հեռու էր քաշվում խմբից և շատ անգամ գնում էր Ղազարից դուրս—դաշտերում թափառելու....

—Ինչո՞ւ հիւանդ է... ասում էին պաշտօնակիցները։

Բայց յանկարծ տէր-Մարտիրոսը փոխվեցաւ, նրա տխրութիւնը բոլորովին անցաւ, նա այժմ գուարթ էր, նրա դէմքը այժմ փայլում էր, նա սկսեց նորից խօսել, կատակներ անել, մինչև իսկ խելք։

Մակայն իր այս զուարթութեան մէջ իսկ նա տարբերակ էր։ Որովհետև զուարթութիւնից թիւթեացել էր, դէմքը փայլում էր այնպէս ուրախ, որ կարծես մի մեծ գանձ էր գտել, կատակներ անում էր սովորականից աւելի, ծիծաղում էր իր սովորութեան հակառակ աւելի բարձրագոյն և տեղական ու խմբում էր աւելի և աւելի շատ, այնպէս որ մի օր որբազան առաջնորդը յանդիմանեց նրան ասելով.

—Տէր-Մարտիրոս, թիւթեացել ես, ինչ ես գտել որ այդպէս զուարթացել ես... եթէ գանձ ես գտել, ինչու ես մոռանում քո առաջնորդին։

Մակայն տէր Մարտիրոսը և ոչ իսկ ուշադրութիւն էր դարձնում նրան։ Իր պաշտօնակիցները մի օր ստակացին, տեսնելով որ տէր-Մարտիրոսը այլ ևս հաւատում է իրանց և հաստիք կրկնու ժամանակ, փողը առանց համբուլու գրպանի էլցնում։

—Իսնթիացել է... բարոյովին խենթացել... ասում էին նրանք։ Մի օր տէր-Մարտիրոսը յանկարծ Գեօլ-բաշին գնաց և վարձեց քսան հատ մշակներ և որմնադիրներ, տարաւ տուն, հրամայեց իր կնոջ և որդեղը, որ քաշվին դրացիի տունը և տունը սկսեց քանդել տալ.... յետոյ կանչեց մի արմաւ կազմել մի երկարականի փառաւոր տուն շինել տալու համար....

Թիֆլիսի ամենաաղքատ ընտանիքները Բանուրը վարձկան է, նա ստանում է միայն այսօրվան օրավարձը, իսկ վաղը սպանում է նրան և նրա ընտանիքին սովը, եթէ նա անգործ է մնում, այդ է հենց ամեն անգ էլ գործարանի բանւորների տնտեսական կեանքի յատկանիշը։ Եւ օրակցական երկիրներում եթէ բանւորները չեն չարտվում փողոց ընդհանուր տնտեսական կրիդինների ժամանակ, այլ պարապ են մնում միայն ժամանակաւորապէս մեքենաների փչնալու կամ մի այլ պատճառով՝ այդպիսի դէպքերում գործարանատէր կապալաւորները աւելի բարեխիղճ են լինում դէպի իրանց բանւորները, շարունակելով վճարել նրանց իրանց վարձը, մինչև անգամ գործի կանգնած ժամանակ։ Բարեխիղճ ասելն էլ սխալ է այդ դէպքում, որովհետև գործարանատէրը իր շահագիտական տեսակէտից դրդված է անում այդ Բայց ինչ կուգէ լինի Եւրօպայի գործարանատէրը, այդ դէպքում կարելի է համարել նրան բարեխիղճ, համեմատելով մեր մանր մոները աղա-գործարանատէրերի հետ։ Երեւելայեցէք թէ ինչ է անում աղա-գործարանատէրը. մի քանի ամիս առաջ խնայողական արկղ է հիմնում իր բանւորների համար՝ նրանցից ամեն մէկի վարձից ամիսը 50—100 կօպ. հանելով, որպէս զի գործարանի գործը դադարած ժամանակ՝ այդ խնայողական արկղից աղան բաժանէ իր բանւորներին իրանց փողը, քաղցած չը մնալու համար։ Անցնում է 4—5 ամիս, գործարանը կանգնում է շաքարներով կամ ամիսներով. խեղճ բանւորները ինչ անեն, ինչ որ խնայած փող է ունենում ամեն մէկը, նրանցից այս երեք չորս ամսվայ ընթացքում առնում է աղայից և մի քանի օր կառավարվում իսկ յետոյ ինչու պիտի ապաւինել թշուառ բանւորները իրանց թշուառ ընտանիքներով. որքան էլ դիմում են աղային, աղան չէ վճարում որ և է վարձ, մինչև անգամ գոնէ մօտիկ ապագայում գործի ժամանակ դարձեալ նրանց վարձի հաշվից հանելու պայմանով։ Ինչ անեն Այդ մարդիկ չեն էլ մտածում որ բանւորներին հարկաւոր է ուտել, խնել, չը մրսել, ոյժ և կարողութիւն պահպանելու, դարձեալ բանելու համար ապագայում....

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Թիֆլիսի դուռնայի ձայնաւորներից մէկը զիտաւորութիւն ունի առաջարկել դուռնային, որ կովկասեան ցուցահանդիսի փակվելուց յետոյ քաղաքը մի այդ գի զարգացնէ այն դաշտի վրա, որտեղ կառուցված են այժմ ցուցահանդիսի շինութիւնները։

Երբ պաշտօնակիցները այդ լսեցին, ապշած նախ իրարու նայեցին և ապա տէր-Պետրոսը ասեց.

—Տեսնում էք անիծեալին... կամ գանձ է գտել և կամ փողերը պահում էր և այժմ երևան է հանում....

Որչափ կուզէին թող զանազան կարծիքներ տանէին, իրողութիւնը այն է, որ տէր-Մարտիրոսը իսկապէս մի մեծ գանձ էր գտել.... իսկ թէ որտեղից, այդ կը պարզի հետեւեալ նամակը, որ նա երկիւղեանք քաշվելով իր սենեակը, գրեց....

Ահա այդ հետաքրքիր նամակը.

«Սիրելի խաչատուր աղա....

«Տեսնում եմ շինում և առ այժմ 100 ոսկու պէտք ունեմ, յոյս ունեմ, որ կը վճարես այդ չնչին գումարը. միամիտ կաց, խոստովանանքը միշտ դադանի պիտի պահես. փողը պիտի ուղարկես կարծես։ խոստովանա՛յալդ Մարտիրոս քահանայ։

Սիր այս նամակը խանութում ստացաւ խաչատուրը, նախ աղած բերողին նայեց, որ քահանայի որդին էր, յետոյ մի անգամ ևս կարդաց, գունաթափվեց, պահ մի մտածեց, ապա մի խոր անքաշեց և քահանայի որդու տոպրակի մէջ լցրեց լուռութեամբ 100 ոսկին....

Եթէ խաչատուրը այն սովալի դէպքերից յետոյ գունաթափվել էր բոլորովին, միւս առաւօտեան, երբ հայելիի մէջ նայեց, տեսաւ, որ մազերի կէտը սպիտակել են.... մի խոր անքաշեց, առաւ վերաբրկուն և տնից դուրս գնաց մեռնալով....

Մինչև քահանայի նոր տան չէնքը վերջանալը, տէր-Մարտիրոսը իր նոր գանձարանից չուրջ 500 ոսկի էր առել....

—Չըմ, ծիծաղեց նա—չնչին գումար.... կաթիլ ծովից.... այժմ սկսեց բռն գործին....

Եւ նա այս անգամ միանգամից 1.000 ոսկու մի

լաւ կը լինէր որ յիշեալ ձայնաւորի առաջարկութիւնն ընդունվէր և վերջապէս մենք խելքի գալինք։ Ժամանակ է արդէն մտածել նոր այգիներ դարձանելու մասին։ Ժամանակ է արդէն խելքի գալ, մտածել քաղաքի հարկու հազար բընակիչների առողջութեան մասին։

Պ. Մարտիրոս Հախնաղարեանց, որը բժշկում է հիւանդներին սօլիտէր ասված հիւանդութիւնից, խնդրում է մեզ յայտնել ի զիտութիւն հասարակութեան, որ նա կենում է այժմ Թիֆլիսում, Մալայա Օրբելանովսկայա փողոցում (Малая Орбеляновская улица) № 26.

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼԱՒՍՕՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՒՄ

Անգլիական երեխի պետական մարդը, Գլաւսոն, այժմ Պարիզում է։ Այս օրերս Պարիզը ճաշկերպի թուեց Գլաւսոնին «Կոնտինէնտալ» ասված հիւրանոցի դահլիճում։ Այդ ճաշկերպի ժամանակ Գլաւսոնը հետեւել նշանաւոր ճառ խօսեց, ֆրանսիական լեզուով։

«Ես ամբողջ սրտից հիանում եմ ձեր ցուցահանդէսով, և հպարտութեամբ յիշում եմ, որպէս անգլիացի, որ առաջին համաշխարհային ցուցահանդէսը, 1851 թվին, մեզ մօտ Անգլիայում տեղի ունեցաւ։ Այնու ամենայնիւ ֆրանսիային վիճակվեց տալ համաշխարհային ցուցահանդիսի լուկկեւներին այդ տեսակի գեղեցիկ և համաժողովային նշանակութիւն։ Ինձ հիացնում է ամեն բան, ինչ որ տեսնում եմ Պարիզում. այստեղ ամեն բան հետաքրքիր է ամենից համար, քանի որ մարդը գտնւմ է իրան Պարիզում ոչ թէ միայն որպէս իր երկրի քաղաքացի, բայց և որպէս համաշխարհային քաղաքացի։ Զի անկասկած հասկանալի կը լինի իմ ուրախութիւնը.... Պարիզը դեռ երբեք չը տեսնված քաղաքի տպաւորութիւն է գործում ինձ վրա։

«Ես կուզեայի դարձեալ մի քանի բան ասել ձեզ։ Խօսել ձեր ներքին քաղաքականութեան մասին կը լինէր զրեթէ անտեղի յանդգնութիւն։ Այնու ամենայնիւ պարտք եմ համարում վկայել, որ հանրապետութիւնը արդէն ամբողջ տասն և երկու տարի գոյութիւն ունի ֆրանսիայում, և որ նրա պետական գործունէութիւնը իր կշիւման բարձրութեան վրա է կանգնած....

«Նայն ժամանակի ընթացքում գրեթէ վեց

նամակ գրեց իր գանձատան.... Փանձատուրը այս անգամ ապստամբեց, բայց խորամանկ տէր Մարտիրոսը առաւօտեան չուկայից արդէն թուղթ և թանաք դնել էր առատօրէն, ուստի ժպտալով նստեց և գրեց.

«Սիրելի խաչատուր աղա....

«Մինչև չորս օր ժամանակ եմ տալիս քեզ, որ 1.000 ոսկին ուղարկես. խոստովանեցիք ես վախեցում, մի վախենայ, ոչ զքեզ ևս ասի, այդ արդէն քեզ խոստացել եմ, բայց 1.000 ոսկին էլ չը պիտի մերժես գաղտնիքը պահողին։ Հիւ, լաւ միտս ընկաւ, Գերթեւում մի նոր հողի մօտ մի մեծ և սիրուն արտ ունես լսեցի, այն արտն էլ, իբր նուէր, չես տալ քեզ շատ սիրող խոստովանա՛հորդ....»։

Զորս օրից յետոյ հազար ոսկին տէր-Մարտիրոսին եկաւ արտի թղթերի հետ և ահա իսկոյն չուկայում տարածվեց, որ Գրիգոր աղայի որդին, խաչատուր աղան ծախել է իր բոլոր հողերը և այժմ գործերը շատ վատ դրութեան մէջ են.... Ի հարկէ վատ դրութեան մէջ կը լինէին. հէշտ է մի վաճառականին և այն էլ խղճումի պէս մի փոքրիկ քաղաքի վաճառականին, մի քանի ամսվայ մէջ կորցնել 1.500 լիւր....

Եթէ նամակը կրկնվէր, խաչատուրը այս անգամ ստիպված էր տունը և խանութը ծախել.... Մի շաբաթից յետոյ, մի օր, երբ խաչատուրը եկեղեցու սեղանի առջև աղօթում էր լաւաղին, մօտեցաւ նրան տէր-Մարտիրոսը և կոպտութեամբ ասեց նրա երեսնի ի վեր.

—Խաչատուր, պարտաւորեալ ինձ շատ են նեղացնում, չես կարող մի հազար ոսկի էլ ձարել ինձ համար.... և մօտենալով ախանջին՝ մի վախենա, ասեց, խոստովանանքը միշտ դադանի է մնացել....

(կը շարունակվի)



վարում էր երկու զորանոցի խաղերը: Թագաժառանգ Յեսարեվիլը մեծ ուշադրություն և հետաքրքրություն ցուցաբերեց ամբողջ հեծելազորին: Այս թագաժառանգ Յեսարեվիլը անցկացրեց կայսրի մոտով իր անուան գունդը, և իբրև հրամանատար, շնորհակալություն յայտնեց զնոր ունեցած աջողություն համար: Շարժվեց որսորդական ամբոցում կայսրը միշտ վերաբերվում էր զէպի թագաժառանգը սիրալիր կերպով: միմեանցից բաժանվելն էլ շատ սիրալիր էր: կայսրը ճանապարհ գցեց Նորին Բարձրությունը մինչև զուռը և մնաց բարեկամական հարաբերեց նրան: Մնաց բարեկամական հարաբերությունը մի քանի անգամ գոհանակություն յայտնեց իր այցելություն համար: Ամբողջ պատուաւոր պահանջ ուղեկցեց թագաժառանգին մինչև իր: կայսրի հետ արած որսի ժամանակ թագաժառանգ Յեսարեվիլը մի եղջիր սպանեց:

Կիւ, 7 սեպտեմբերին: Առաւօտեան 4 ժամին այստեղ հասաւ արտակարգ գնացքով թագաժառանգ Յեսարեվիլը, ուղեկցութեամբ պատուաւոր պահակի. նրան զմեռաւորեց հոգեմարշալ Զեկենդորֆ կայսրանում: Նորին Բարձրությունը ոտով ուղեկցեց Ուէզէնբերկէ, ուր նրան մնաց բարեկամական զերմանական պաշտօնակները, հրամանատար ծովագետը, կոմս Գուց և նաւատորմի օֆիցերները: Թագաժառանգ Յեսարեվիլը մեկնեցաւ Յարեվիլ: նաւով, որը առաւօտեան մօտ 5 ժամին ծովը մտաւ:

Բեթլեհ, 7 սեպտեմբերին: կայսրուհի—մայրը երէկ իր աղջիկներով գնաց Կոպենհագեն:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 7 սեպտեմբերին: Թագաժառանգ Յեսարեվիլը այսօր այստեղ հասաւ Յարեվիլ:

Նաւով կոմս Կուտուզովի ուղեկցութեամբ և ապա գնաց Ֆրէդերիկսբորգ:

ՊԱՐԻԶ, 7 սեպտեմբերին: Փաղաքացիական ինքնաշարժի ընկերությունը էյֆելեան աշտարակի վրա մի խնձոյր կազմեց ի պատիւ 250 ուսուսպանիացի, պորտուգալացի, բրազիլացի և չիլիացի ինքնաշարժի, որոնք այժմ դառնում են Պարիզում: էյֆել ընդունեց նրանց աշտարակի վրա, և կէսօրին աշտարակի վրա տրվեց բանկէտ: Բանկէտում մասնակցող ուսանողի մէջ էին: կարցեմ, Բարանով, Սոխոլով, Պոզնանսկի, և Բոբոլին: էյֆել ասեց. «Մեզ համար թանկ են ձեր հայրենիքները. առանձին համակրութեամբ մենք կապված ենք ուսուս մեծ ազգի հետ. ձեր գործերը, զեղարուեստագէտները և զինականները նոյն պատիւն ունեն մեզ մօտ, ինչ պատիւ մերոնք ունեն ձեզ մօտ: Մենք ծափահարում ենք Ռուսաստանի աջողութեանը և քաղաքակրթության այն աջող գործին, որը Ռուսաստանը սկըսել է Ասիայում, կառուցանելով երկաթուղի, որի արի կառուցանողն է գեներալ Աննենկովը: կարցեմ ֆրանսերէն լեզուով, իբրև պատասխան, մի ճառ ասեց, որը ընդունվեց բուռն համակրութեամբ և անվերջ գոչիւններով: «Կեցցէ Ռուսաստանը, կեցցէ Ֆրանսիան: կարցեմ ասեց. «Իմանալով որ էյֆելեան աշտարակի քաշն է 7,000 տոնն, ես մտածեցի. Օրենբուրգի կամուրջը նոյն պիտի ծանրութիւն ունի, բայց դրված է չորս հիմքերի վրա, մինչդեռ էյֆելեան աշտարակը դրված է միայն չորս ոտների վրա: Մեր գիտությունը դեռ չհասնում է: Մենք ձեզանից ոգևորություն ենք քաղում:»

Խմբագիր—հրատարակող Գրիգոր ԱՐՄԻՆԻ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.  
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ շինգարթի, սեպտեմբերի 14-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շոգենաւը, նաւապետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) ղուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոլուի տան, Նարեքէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արժուէրի գաղլերում, № 114.

(2 և 9) 2—2

ՄԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏՆԵՐԻ ԵՒ ԱՇԽԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՆՈՅՆ տեղը համաձայն են պատրաստել աշակերտներ թէ արական և թէ իգական զինադիւանների համար. համաձայն են նոյնպէս և ԿԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ անել աշակերտների հետ: Ցանկացողները կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисть. Николаевская улица, № 80.

4—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.  
ԿԻՆ-ԲԱԺԵՎ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.  
ԲԵՆԿԻՆՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամնացաւի)  
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.  
ՓՈԿԻՆՍԿԻ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էկեմթոտերապիա):  
ԲԵՆԿԻՆՍԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցում են մահկաբարձուհիք՝ Երևանցեան և Արտազեան:  
Վճար—50 կ.: Համախօրհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:  
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԴԿՈՎՍԿԻ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ծանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:  
Աւանդելի տւարկայք տրաւ են՝ 1) Առևտրական հետեսութիւն, 2) Առևտրական թուրքանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուրքանութիւն համբիլի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) զեղադրութիւն:  
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնովի բնակարանում, Սոլջակով, Աղէքսանդր ֆրիդմանովի տանը, № 9 Սերգիէվկայա և Նազորնայա փողոցների անկիւնում, զեղատան դիմաց: Ծրագրերը ու կանոնները կարելի է ստանալ ՋՐԻԱՊԷՍ եղբ. Ծովանոյնների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնովի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնովին.—въ Тифлисъ, С. П. Мануэляncy.

14—20 (Ե. Շ.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲԺՇԿԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ՄԿՏՁԵԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (ԹԻՖԼԻՍԵՑԻ)  
Տեղափոխվեց նոր բնակարան (Սապէրնայա փողոց, տուն Արդադանովի № 7):  
3—10

ՍՈՒԻՈՒՄԻ շրջանի հայ գաղթականների Մծարա գիւղի հայոց ուսումնարանի համար հարկաւոր է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ չորրորդ կարգից, որ աւանդէր միգրանտ ուսումնարանի բոլոր աւարկանները: Պայմաններն են. տարեկան վարձատրութեան 400 ռուբլ, առանձին բնակարան, վառելիք և մոնէր: Դիմել. чрезъ Оухумъ въ м. Гудаты, священнику с. Мцары, Мивиртичу Минасянцу.  
1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՆՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Գրեց Ն. ՏԵՐ-ԱԷՏԻՔԵԱՆ

Գինն է 30 կօպէկ:

Ծախվում է «Աղբիւր» խմբագրատանը:

1—5

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 15/27 սեպտեմբերի ԲԱԹՈՒՄԻՑ ղուրս կը գնայ շոգենաւ ERYMENTHE (ԷՐԻՄԵՆԹ) նաւապետ MERLIN (ՄԵՐԼԵՆ), մոնէրով Կ. Պոլիս, Ջմիւռնիա, Սիրա, յարակցելով Եաֆֆա գնացող շոգենաւերի հետ, մոնէրով Պորթ-Սաիդ, Ալէքսանդրիա, Պորտ-Սաւոս և Լաիվար:

Ազգեսները՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆՉԵՐ, ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՈՐԳ ԷՆՋՈՒԲԵԱՆ ԷՆՋՈՒԲԵԱՆ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ ԳՕԼԴԱՌՍ:

1—2

ՆԱԽԱՋԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր տեղեկութեանը հասաւ, որ ԷՅՆԵՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արդիւնաբերած այրված կաֆէի նշանագրերը (ЯРЛЫКИ) կեղծվում են և որ մայիսի 12-ին ներկայ թւի մեզ աղօղակեց զանեկ Թիֆլիսում մի հիմնարկութիւն, որը զբաղված է այդ տեսակի կեղծութիւններով, այնպէս որ զատաստանական իշխանութիւնը կնքեց այրված կաֆէի աւելի քան 2,000 մետաղական արկղիկներ, մեր ֆիրմային նմանեցրած այդ տեսակի կեղծ նշանագրերով և զտաւ դարձեալ 3,000 նոյնանման եւրիկներ:  
Ձր նայելով այդ հանգամանքին, այդ կաֆէի աւետուրը դարձեալ շարունակվում է և այդ պատճառով մենք ստիպված ենք նախազգուշացնել յարգելի հասարակութեան, որ ՄԵՐ եւրիկները տպված են ՄԻԱԿԵՐՊ ՀԱՌԱՍԱՐ ՏԱՌԵՐՈՎ, այն ինչ կեղծված եւրիկների վրա հետեւեալ խօսքերը. «ЯРЛЫКЪ УТВЕРЖДЕНЪ ПРАВИТЕЛЬСТВОМЪ» և գործածելու եղանակի բացատրութեան տակ ստորագրութիւնը «Товарищество паровой фабрики ЭЙНЕМЪ» աւելացրած են կառուչկեան զորոշումը:

Շոգէգործարանի ընկերութիւնը  
ԷՅՆԵՄ ՄՕՍԿԼԱՅՈՒՄ

2—6 (Ե. Շ.)

ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

ՄՕԼՏԻՖԱՌԻՄ (Կորսիկա կղզի) և ՎԻԳՆՈՒՄ (Գար)

ՇԵՐԱՄԻ ՑԷԼԼԻԼԷՐ ՍԵՐՍԵՐ (ՊԱՍՏՈՐԻՄՍԵՍԵՐ)

BERTRAND ET ALOISI



ԳԵՂԻՆ ԵՒ ՍՊԻՏԱԿ ԿՕԿՕՆՆԵՐ

Bertrand et Aloisi սերմերը գնելու համար դիմել Թիֆլիսի շերամապահական կայարանը, սկսած 1889 թվի հոկտեմբեր ամսից:

10—10